ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-6-Ը ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՎԻԼՆՅՈՒՍ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Խաչիկ Սողոմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս, 2024թ. նոյեմբերի 4-6-ը:

4. Հրավիրող կողմը.

Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցելու «Անվտանգ տրանսպորտային համակարգ Հայաստանում (III)» ծրագրի նոյեմբերի 5-ի ամփոփիչ հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները.

Հանդիպմանը քննարկվել են ծրագրի շրջանակներում երկու երկրներ կատարված այցերի արդյունքները, ուսումնասիրված փորձը և ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի ՀՀ օրենսդրության փոփոխությունների համար իրականացված աշխատանքները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տեղի է ունեցել երկկողմ հանդիպում Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչության ղեկավարի հետ: Քննարկվել են ծրագրի ընթացքում կատարված աշխատանքները, նմանատիպ նոր ծրագրի իրականացման հնարավորությունը:

Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչության արտաքին կապերի ստորաբաժանման ղեկավարն իր ելույթում ներկայացրել է ծրագրի շրջանակում երկու երկրներ այցերի արդյունքները, իսկ ՏԿԵՆ պատվիրակությունը՝ ծրագրի ընձեռած հնարավորությունները և գրանցված արդյունքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը՝ անկախ ծրագրի ավարտից: Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչությունը պատրաստակամություն է հայտնել շարունակել աջակցությունը, մասնավորապես՝ տրամադրել տեխնիկական զննության մասով Լիտվայում գործող կարգավորումները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով ծրագրի ընձեռած հնարավորությունները և գրանցած արդյունքները, առաջարվում է շարունակել այս ծրագիրը կամ կազմակերպել նմանատիպ նոր ծրագրեր: Այն հնարավորություն կտա ՏԿԵՆ աշխատակիցներին տեղում ծանոթանալ լիտվական կամ եվրոպական այլ երկրների ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում գործող կարգավորումներին և փորձին, ինչպես նաև դրանք տեղայնացնել ՀՀ-ում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

11.11.2024թ.